# ԿՐԹԱՄՐՑԱՆԱԿ



«Հայ Ձմեռ պապ» բարեգործական հիմնադրամը և Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտը (ՀՖԿՍՊԻ) հայտարարում են երախտիքի և հարգանքի ՈՍԿԻ ՍԵՐՄԵՐ https://www.youtube.com/watch?v=H6vT1gz_whc կրթամրցանակային ծրագրի 3-րդ մրցույթի մեկնարկը: Այն նվիրված է Արցախյան 44-օրյա պատերազմի հերոս, ինստիտուտի շրջանավարտ Սևակ Մնացականյանի խնկելի հիշատակին. https://www.youtube.com/watch?v=V15HGhj2iLg :

**Չափորոշիչները**

Մրցանակը նախատեսում է տարեկան 300,000 (երեք հարյուր հազար) դրամի չափով աջակցություն տրամադրել ՀՖԿՍՊԻ այն ուսանողին/մագիստրոսին/ասպիրանտին (սկսած բակալավրիատի 2-րդ կուրսի 2-րդ կիսամյակից), որի տվյալները կհամապատասխանեն հետևյալ չափորոշիչներին (բոլորին կամ գերակշիռ մասին).

- առաջադիմություն,
- գիտական ակտիվություն,
- մարզական հաջողություններ,
- Սևակի հայրենատիրության ճանաչում, համախոհություն,
- քաղաքացիական հանձնառություն /կամավորական աշխատանք, հասարակական ակտիվություն/,
- այլ:

**Մրցույթին մասնակցելու կարգը**

Անհրաժեշտ է մինչև 2024 թ. հունվարի 15–ը համապատասխան ֆակուլտետի դեկանի (tigran.simonyan@sportedu.am և vardan.abovyan@sportedu.am ) էլ. հասցենին ուղարկել հավակնորդի

- **CV-ն,**
- **մոտիվացիոն նամակը,**
- **մասնագիտական հաջողությունները վկայող նյութերը:**

Կրթամրցանակակրի ընտրության պատշաճ ընթացքը կկազմակերպի հանձնաժողովը, որը բաղկացած է ինստիտուտի դասախոսական կազմի, փորձագետների, Սևակի ընտանիքի, բարերարների և «Հայ Ձմեռ պապ» հիմնադրամի ներկայացուցիչներից: Ընթացակարգի մասին պատկերացում կազմելու համար՝ նախորդ երկու մրցույթների լուսաբանումներն՝ այստեղ.

https://www.facebook.com/profile/100064619149081/search/?q=%D5%8D%D6%87%D5%A1%D5%AF%20%D5%84%D5%B6%D5%A1%D6%81%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%D5%B5%D5%A1%D5%B6

Կրթամրցանակի հովանավորը ամերիկահայ բարերար **Իռեն Ծատուրյանն** է.

https://www.facebook.com/profile.php?id=1268188157

**«Մեզ թաղեցին, բայց չգիտեին, որ մենք սերմեր ենք»:**

Ոսկի սերմերից ոսկի ծիլեր դուրս կգան: